Ես մարդ եմ: Ոչ մի մարդկային բան խորթ չէ ինձ համար: Եթե դու ճիշտ ես, ես կանեմ այն, ինչ որ դու ես անում: Եթե դու սխալ ես, քեզ ճիշտ ուղղության վրա կդնեմ:

Թերրենց

Եթե դու չես կարողանում լիովին ոչնչացնել վատ մտքերը կամ չես կարողանում գործ չունենալ արմատացած արատների հետ այն հաջողությամբ, ինչպես որ դու կցանկանայիր, ապա դա պատճառ չի, որպեսզի [դու] ընդհանրապես հրաժարվես հասարակական կյանքից: Դու չես կարող փոթորիկի ժամանակ լքել նավը միայն այն պատճառով, որ չես կարողանում կառավարել քամիները:

Մյուս կողմից, անիմաստ է փորձել արտահայտել բոլորովին նոր գաղափարներ, որոնք ակնհայտորեն ոչ մի ազդեցություն չեն թողնի այն մարդկանց վրա, ովքեր դեմ են այդ գաղափարներին:

Քանզի ոչինչ չի լինի կատարյալ, մինչեւ մարդկությունը չհասնի կատարելության, ինչն իմ կարծիքով բազմաթիվ տարիներ կպահանջի: Ավելին, դա ուտոպիա է: (1516)

Ձեր մտապատկերը հստակ կլինի միայն այն ժամանակ, երբ դուք նայեք ձեր սրտի մեջ:
Ով դուրս է նայում, նա երազում է:
Ով ներս է նայում, նա արթնանում է:

Յունգ

Հաճախակի եւ շատ ծիծաղել, արժանանալ խելամիտ մարդկանց հարգանքին ու երեխաների սիրուն, գնահատվել անկեղծ քննադատների կողմից եւ հանդուրժել կեղծ ընկերների դավաճանությունը, գնահատել գեղեցկությունը, ուրիշների մեջ գտնել լավագույն կողմերը, մի քիչ բարելավի աշխարհը, թերեւս երեխայով, այգով, կամ բարելավված հասարակական միջավայրով, գիտենալ, որ քո շնորհիվ ինչ-որ մեկի հոգսը թեթեւացել է՝ սա է հաջողակ լինելը:

Ռալֆ Վալդո Էմերսոն

Փիլիսոփա լինելը պարզապես սրամիտ լինելը չէ, եւ ոչ էլ դպրոց հիմնելը, այլ սիրել իմաստությունը՝ ապրել իր թելադրանքերին

համապատասխան՝ պարզ կյանքով, անկախությամբ, մեծահոգությամբ եւ հավատով:

Մեր կյանքը վատնվում է մանրուքների վրա:

Եթե մեկը վստահորեն առաջ է գնում իր երազանքների եւ ցանկությունների ուղղությամբ, ապրելով իր երեւակայած կյանքով, նա անակնկալ պահին կհասնի հաջողության:

Ես կգերադասեի ազատորեն մենակ նստած լինել դդումի վրա եւ ունենալ դդումն ամբողջությամբ, քան նեղ նստած թավշե բարձի վրա: Եթե մարդ չի հասցնում քայլել իր ուղեկիցների հետ համաչափ, հավանաբար դա նրանից է, որ տարբեր թմբկահարների է լսում: Թող նա քայլի իրեն հարազատ ռիթմով ինչքան էլ որ այն հեռվից գա կամ ինչ ռիթմով էլ այն լինի:

Ես չեմ եկել այս աշխարհ, որ այն դարձնեմ լավ ապրելավայր, այլ՝ որպեսզի պարզապես ապրեմ այստեղ՝ լինի դա լավ թե վատ: Մարդն ամեն ինչ չէ, որ պետք է անի, այլ ինչ-որ մի բան. եւ քանի որ նա չի կարող ամեն ինչ անել, սա պատճառ չի, որ նա ինչ-որ վատ բան անի:

Կենդանի շունն ավելի լավ է, քան սատկած առյուծը: Պե՞տք է, որ մարդ գնա եւ կախվի միայն այն պատճառով, որ նա գաճաճների ցեղից է, եւ չձգտի դառնալ նրանցից մեծագույնը: Թող յուրաքանչյուրը զբաղվի իր գործով, եւ փորձի դառնալ այն, ինչը որ ստեղծվել է:

Ինչքան էլ նվաստ է ձեր կյանքը, ընդունեք եւ սիրեք այն: Մի խուսափեք դրանից եւ մի դժգոհեք: Այն այնքան վատը չէ, ինչքան որ դուք եք վատը: Այն աղքատ է թվում, երբ դուք հարուստ եք: Դժգոհը նույնիսկ դրախտում թերություններ կգտնի: Սիրեք ձեր կյանքը, ինչքան էլ այն աղքատ լինի: Դուք նույնիսկ աղքատանոցում ապրելիս կարող եք ունենալ որոշ հաճելի եւ փառահեղ պահեր:

Թորո